

Սիմպոզիումի հաշվետվություն

Ամփոփ նկարագիր

Մարդու իրավունքների նոր տակտիկաների (New Tactics in Human Rights) միջազգային սիմպոզիումը (www.newtactics.org) իր տեսակի մեջ առաջին ուսուցողական հանդիպումն էր, որը հավաքել էր մարդու իրավունքների ակտիվիստներին տարբեր բնագավառներից, որպեսզի անդրադառնան ոչ թե առանձին թեմայի կամ բնագավառի, այլ մի ամբողջ շարք մարտավարական հնարավորությունների ու հնարավոր լուծումների վրա:

89 երկրների շուրջ 450 իրավապաշտպաններ հավաքվել էին Անկարայում չորս օր: Ամբողջ ծրագիրը ներառում էր հինգ մարտավարական աշխատանքային հանդիպումների նիստեր, 35 մարտավարական և ռազմավարական աշխատանքային հանդիպումներ, հինգ լիակազմ նիստեր, երկու տարածաշրջանային խմբային հանդիպումներ և մի շարք ոչ պաշտոնական ցանցային հանդիպումներ:

Սիմպոզիումի զեկուցողներին առաջարկվել էր կենտրոնանալ ավելի շատ տակտիկաների վրա ցույց տալ և թե ինչպես են իրագործվել դրանք, քան թե պրոբլեմը, որի հետ գործ են ունեցել: Նպատակն էր՝ մասնակիցներին բավականին ինֆորմացիա տալ, որպեսզի պատկերացնեին իրենց սեփական իրավիճակներում յուրաքանչյուր տակտիկայի կիրառումը և համոզեն մյուսներին օգտագործել այն: Յուրաքանչյուր տակտիկական սեմինար ներառում էր մեկ հիմնական /յուրահատուկ/ և երկու լրացուցիչ տակտիկա, որոնք նման էին հիմնական տակտիկային, բայց օգտագործվել էին շատ բարդ իրավիճակներում և մարդու իրավունքների տարբեր խնդիրների ուղղությամբ: Այս մոտեցումը լուսաբանում էր տակտիկաների մի իրավիճակից մյուսին փոխանցելիությունը:

Սիմպոզիումի համար գլխավոր նպատակ էր, որ այն ծառայեր որպես հիմք հետագա աշխատանքների համար, որոնք հիմնված են “New Tactics” ծրագրի սկզբունքների վրա: Սիմպոզիումի մասնակիցները սկսել էին հետագա համագործակցության հիմքեր ստեղծել, մինչ կմեկնեին Անկարայից: Նրանք սիմպոզիումի ընթացքում երկու անգամ հավաքվել են տարածաշրջանային խմբերում, որտեղ կարող էին կապ ստեղծել և համագործակցության պլաններ կազմել համատեղ ծրագրերի համար:

Սիմպոզիումի կազմակերպիչները

Հելսինկյան Քաղաքացիական Ասամբլեայի Թուրքիայի կոմիտեն, որը հիմնադրվել է 1990 թ-ին: Այն ձգտում է հզորացնել Թուրքիայում քաղաքացիական հասարակությունը՝ նպաստելով մարդու իրավունքների պաշտպանությանը և ժողովրդավարական գործընթացներին:

Խոշտանգումներից տուժածների կենտրոնը (CVT), իր տեսակի մեջ առաջինը Միացյալ Նահանգներում, որն աշխատում է խոշտանգումներից տուժած անհատների, նրանց ընտանիքների, համայնքների վերքերը ապաքինել և դադարեցնել խոշտանգումներն ամբողջ աշխարհում:

Թուրքիայի և Միջին Արևելքի հանրային կառավարման ինստիտուտը, որը Թուրքիայի կառավարության կրթական հաստատություն է հանրային պաշտոնյաների և քաղաքացիական ծառայողների հետազոտական և ներքին ծառայության դասընթացների համար:

“New Tactics” ծրագրի մասին

Միջազգային սինյոզիումը կազմակերպվել էր համատեղ՝ Հելսինկյան Քաղաքացիական Ասամբլեայի Թուրքիայի Կոմիտեի, Խոշտանգումներից տուժածների կենտրոնի և “New Tactics in Human Rights” ընդհանուր ծրագրի շրջանակներում: Թուրքիայի և Միջին Արևելքի հանրային կառավարման ինստիտուտը նույնպես գործընկեր էր, որը ներդրում ուներ պլանավորման գործընթացի և սինյոզիումը հյուրընկալելու մեջ: “New Tactics in Human Rights” ծրագիրը միջազգային նախաձեռնություն է, որը համակարգվում է Խոշտանգումներից տուժածների կենտրոնի կողմից: Այն նպաստում է մարդու իրավունքների տակտիկական նորարարության և ռազմավարական մտածողությանը միջազգային հանրության շրջանակներում:

1999 թ-ից “New Tactics in Human Rights” ծրագիրը աշխատել է.

- պարբերեքար ինֆորմացիա և մի շարք մարտավարական հնարավորություններ տրամադրել մարդու իրավունքների շարժումներին
- նպաստել մի դասընթացից մյուսին փորձի փոխանակմանը և օգնել, որ կիրառողները ուսուցանեն ուրիշներին
- ձևավորել գործիքներ և ցանցեր, որոնք կիսվում են իրենց ստեղծագործական մտքերով և տակտիկական նորարարություններով
- Հնարավորություն տալ գործնականում կիրառողներին՝ օգտագործել մարտավարական և ռազմավարական մտածողությունը

Որպեսզի իրագործվեն այս նպատակները, նոր տակտիկաների ծրագիրը ստեղծել է մի քանի գործիքներ և ցանցեր, որոնք նախագծված են ստեղծագործական մտքեր կիսելու և մի շարք մարդու իրավունքների պաշտպանների շրջանում մարտավարական նորարարություններին նպաստելու համար: Ծրագրի շրջանակներում իրականացվել են հետևյալ աշխատանքները.

- Հավաքել է առաջնորդող խումբ, որը ներառում է աշխարհի 11 առաջնորդներից կազմված խորհրդատվական կոմիտե, 18 երկրներից 22 մարդու իրավունքների առաջնորդներից կազմված աշխատանքային խումբ և 6 գործընկերների կազմակերպություններից կազմված խումբ

- Տպագրել է անգլերեն և թուրքերեն լեզուներով աշխատանքային գիրք, որը ծառայում է որպես մարտավարական մտածողության ներկայացում և լուսաբանում է գրեթե 100 տակտիկաներ, որպեսզի մյուսները ևս կարողանան ադապտացնեն այս մեթոդներն ու ստեղծեն իրենց սեփականը
- Աշխատելով տեղական գործընկերների հետ՝ կազմակերպվել են 5 տարածաշրջանային աշխատանքային հանդիպումներ, որտեղ ընտրված 10 – 12 նորարար կիրառողներ ուսուցանում են մինչև այն մարտավարություններով, որ իրենք զարգացրել են և փորձ ու մտքեր են փոխանակում, որոնք կարող են իրենց տարածաշրջանում բարելավեն մարդու իրավունքների վիճակը:
- Աշխատելով տարածաշրջանային աշխատանքային հանդիպումների մասնակիցների հետ՝ կազմել է 29 տակտիկաների գրքույկ: Դրանցից յուրաքանչյուրը նկարագրում է այն տակտիկան, որն իրավապաշտպաններն օգտագործում են մարդու իրավունքների աջակցության նպատակով, բացատրելով, թե ինչպես մյուսները կարող են օգտագործել նմանատիպ մեթոդներ տարբեր հանգամանքներում: Այս գրքույկներից մի քանիսը կարելի ձեռք բերել ֆրանսերեն, թուրքերեն և իսպաներեն լեզուներով:
- Ստեղծվել է ինտերնետային էջ, որը ընդգրկում է տակտիկական նորարարությունների ավելի քան 130 օրինակ: Այն նաև ներառում է ծրագրային նյութերի էլեկտրոնային տարբերակները:

Սիմպոզիումի նպատակներն ու նվաճումները

Սիմպոզիումը ներկայացնում էր գրեթե տասնամյակների աշխատանքային ցանցերի հավաք, որոնք զարգացրել են գործիքներ ու ուսուցման մեթոդներ “New Tactics” ծրագրով: Միջոցառումը նախատեսված էր աշխարհի բոլոր վայրերից գործընկերներ հավաքելու համար, որպեսզի սովորեն նոր տակտիկական մոտեցումներ, կառուցեն նորարարության միջազգային ցանցեր և մյուսներին ուսուցանեն այն մարտավարություններով, որոնց արդյունքը նրանք ունեցել են կոնկրետ մարդու իրավունքների պաշտպանության բնագավառում: Սիմպոզիումը նպատակ չունեի առաջարկել մտածողության որոշակի մոտեցում կամ հաստատել մարտավարությունների շարք՝ օգտագործելու բոլոր հանգամանքներում:

Սիմպոզիումը լուծեց մի շարք խնդիրներ, ներառյալ.

- Տակտիկաների ցուցադրում, որոնք հասանելի են մարդու իրավունքների համայնքներին, կառավարության պաշտոնյաներին և այլոց:
- Խոստումնալից մարտավարությունների վերաբերյալ ուսուցողական նյութերի և ինֆորմացիայի ստեղծում և տրամադրում

- Նորարարությունների միջազգային ցանցերի ստեղծում, որը նպաստում է մարդու իրավունքների բազմաթիվ պաշտպանների համագործակցմանը:
- Թուրքիայի քաղաքական և քաղաքացիական հասարակության գործիչներին մարտավարությունների ու ամբողջ աշխարհից աջակցության հզոր ցանցերի ապահովում, որպեսզի աջակցեն մարդու իրավունքների պաշտպանությանը:

Կենտրոնացումը մարտավարությունների և ռազմավարության վրա

Սիմպոզիումը վերահաստատեց մարտավարություններով ու ռազմավարությամբ կիսվելու արժեքը: Սիմպոզիումի ընթացքում ուսուցումը հիմնված չէր որևէ թեմայի վրա, այլ ավելի շատ կենտրոնացած էր ռազմավարությունների ու մարտավարությունների վրա, որոնք կարող են օգնել իրավապաշտպաններին՝ կատարելու իրենց առավել արդյունավետ աշխատանքը: Շատ մասնակիցների կարծիքով այս մեթոդոլոգիան ոգեշնչող էր և, որ այն նրանց մտածելու տեղիք տվեց՝ կատարել իրենց սեփական աշխատանքը ավելի լավ:

Մասնակիցների նյութերը

Բոլոր մասնակիցները ստացան մի շարք արժեքավոր աղբյուրներ, որ վերադառնալուց հետո կարող են օգտագործել.

- Մարդու իրավունքների նոր մարտավարություններ. “A Resource for Practitioners”
- 29 մարտավարական գրքույկների ընտրանի: Մասնակիցները ընտրել են նրանք, որոնցով իրենք ավելի շատ հետաքրքրված են: Դրանք բոլորը հնարավոր էր ձեռք բերել անգլերեն, որոշ մասը թուրքերեն, իսպաներեն և ֆրանսերեն լեզուներով:
- CD “Weaving New Tactics into Your World”
- Սիմպոզիումում ներկայացված ավելի քան 90 մարտավարությունների ամփոփ ներկայացում
- Մարտավարական մտածողության և նոր մարտավարությունների ծրագրի վերաբերյալ հոդվածներ

Մասնակիցների մասին

Սիմպոզիումին մասնակցում էին 89 երկրներից ավելի քան 500 մասնակիցներ, որոնցից 327-ը ընդհանուր մասնակիցներ, 111-ը թրեյներներ և խոսնակներ, 80 հոգի աշխատակազմ ու կամավորներ և 33 թարգմանիչ:

Սիմպոզիումի մասնակիցները կարող էին մտքեր փոխանակել, շփվել և հետագա համագործակցության ծրագրեր կազմել:

Շատերի համար այս սիմպոզիումը առաջին միջազգային կոնֆերանսն էր: Ոմանց համար առաջին անգամն էր, որ իրենց երկրից դուրս էին եկել: Երբեմն այն մարդիկ, որոնք ներգրավված են լինում մարդու իրավունքների մեջ տեղական մակարդակում, իրենց մեկուսացած են զգում, քանի որ հնարավորություն չեն ունենում կիսելու իրենց պայքարն ու նոր գաղափարներն աշխարհի մյուս երկրների իրենց գործընկերների հետ:

Բացի 438 գրանցված մասնակիցներից, գրեթե 55 ուսանողներ աշխատել են որպես ժամանակավոր աշխատակազմ և 33 միջազգային և թուրք թարգմանիչներ ներ են դրել իրենց ծառայությունը:

Սիմպոզիումի ժամանակ շատ մասնակիցներ նշեցին, որ թուրք երիտասարդ ժամանակավոր աշխատակազմը էներգիա և խանդավառություն հաղորդեց այդ իրադարձությանը:

Նախապատրաստում սիմպոզիումին

Միջազգային Սիմպոզիումի ուրվագիծը ստեղծվել է ավելի քան ութ տարի առաջ: Նախագծերը այդ ժամանակվանից ի վեր հարմարացվել և զարգացվել է աշխարհի բոլոր վայրերի մարդու իրավունքներով զբաղվողների հետ խորհրդակցելու միջոցով:

Ծրագիրը 2 տարվա ընթացքում անց է կացրել 5 տարածաշրջանային ուսուցանող աշխատանքային հանդիպումներ ամբողջ աշխարհում: Դրանց միջոցով մենք պոտենցիալ թրեյներների ցանց ենք ստեղծել և զարգացրել ենք ուսուցանող մեթոդներ ու գործիքներ, որոնք հետագայում կնպաստեն սիմպոզիումի նախապատրաստմանը: Ուսումնասիրությունը , որն իրականացվել է գործիքների զարգացման նպատակով, ինչպիսիք են on - line մարտավարական տվյալների բազան (www.newtactics.org) և New Tactics in Human Rights գիրքը նույնպես նպաստել են նոր տակտիկաների ու պոտենցիալ մասնակիցների ի հայտ բերմանը :

2004 թ-ի ապրիլին սիմպոզիումի քարտուղարությունը սկսեց նպաստել սիմպոզիումին և ընդունել հայտեր: Online դիմումը մատչելի էր անգլերեն, թուրքերեն, իսպաներեն և ֆրանսերեն լեզուներով: 1000 ստացված դիմումներից, ընտրել ենք անհատների, որոնք, ըստ մեր ընկալման, կարող էին պոտենցիալ հանդիսանալ իրենց տարածաշրջանում ազդեցություն ունենալով մարդու իրավունքների վրա: Մենք առաջնահերթություն տվեցինք սովորական տեղական կազմակերպություններին և ընդգրկեցինք մարդու իրավունքների բազմազան բնագավառների անհատներին: Սիմպոզիումի պաշտոնական բացմանն ու փակմանը հրավիրված էին կարևոր ներկայացուցիչներ Թուրքիայի կառավարությունից, Եվրամիությունից, Միացյալ Ազգերից, Միացյալ Նահանգների պետդեպարտամենտից:

Ավելի քան 300 մարդու իրավունքներով զբաղվողներ հանդիսացան որպես պոտենցիալ աշխատանքային հանդիպումների ներկայացնողներ կամ լիակազմ միստերի խոսնակներ:

Աշխատանքային հանդիպումներ

5 աշխատանքային նիստերի ժամանակ անց է կացվել 35 աշխատանքային հանդիպումներ: Դրանցից 30-ը տակտիկական աշխատանքային հանդիպումներ էին, 5-ը ռազմավարության կառուցման: Ամբողջ երկրագնդից ավելի քան 300 մարդ ներկայացրեց իր մարտավարությունը:

Ներկայացնողները պետք է կենտրոնանային հիմնականում, թե ինչպես են իրականացրել իրենց մարտավարությունները, մասնակիցներին բավարար ինֆորմացիա հաղորդեին, որպեսզի նրանք կարողանային պատկերացնել յուրաքանչյուր մարտավարության կիրառումը իրենց իրավիճակում և համոզեն ուրիշներին փորձել դրանք:

Յուրաքանչյուր մարտավարական աշխատանքային հանդիպում ներառում էր մեկ հիմնական մարտավարություն և երկու լրացուցիչ մարտավարություն, որոնք նման էին հիմնական մարտավարությանը, բայց օգտագործվել են շատ տարբեր իրավիճակներում ու մարդու իրավունքների տարբեր բնագավառներում, որպեսզի ընդգծեն մարտավարությունների փոխանցելիությունը մի կոնտեքստից մյուսը, օրինակ.

- Թուրքիայի, Չինաստանի և Բրազիլիայի իրավաբաններից յուրաքանչյուրը նկարագրեցին իրենց ջանքերը՝ իրենց երկրում զարգացնելու անվճար իրավաբանների ցանց;
- Մալազիայի, Թայլանդի և Միացյալ Նահանգների ներկայացնողները նշեցին, թե ինչպես են իրենց համապատասխան հավատքներից օգտագործում կրոնական դրույթներ, որպեսզի աջակցեն մարդու իրավունքներին:

Քանի որ ավելի լայն մարտավարական գիտելիքների նպատակը ավելի արդյունավետ ռազմավարության զարգացումն է, մասնակիցներին ստիպեցին, որպեսզի հաճախեն հինգ Investing in Strategy Building աշխատանքային հանդիպումներից մեկին: Այստեղ ներկայացնողները բացատրեցին, թե ինչպես են ընտրել, միավորել ու մշակել մի քանի մարտավարություններ, որպեսզի ձևավորեն ռազմավարություն: Ամեն մի ներկայացումից հետո բաց քննարկման ժամանակ էր տրվում, որտեղ շատ մասնակիցներ կիսվեցին մարտավարություն կիրառելու իրենց փորձով և առաջարկեցին մտքեր հենց նոր սովորած մարտավարությունների նոր կիրառումների վերաբերյալ: Մասնակիցներին բաժանվեցին ներկայացված մարտավարությունների մասին գրքույկներ:

Լիակազմ նիստեր

Սիմպոզիումի ընթացքում տեղի ունեցած հինգ լիակազմ նիստերը նախագծված էին որպեսզի մասնակիցները հնարավորություն ունենային հանդես գալ որպես խումբ և տեսնել առանձին տակտիկաներ, որոնց մասին սովորում էին աշխատանքային հանդիպումների ժամանակ մարդու իրավունքների ավելի լայն շարժման կոնտեքստում:

Բացման նիստի ժամանակ Թուրքիայի արտաքին գործերի նախարարը գովեց Նոր տակտիկաների ծրագիրը և սիմպոզիումը Թուրքիայի վրա պոտենցիալ ազդեցություն ունենալու տեսանկյունից: Թուրքիայում ԱՄՆ դեսպանը, Նիդերլանդների դեսպանը և Թուրքիայում Եվրամիության հանձնաժողովի ներկայացուցիչը ողջունեցին մասնակիցներին:

Խմբային հանդիպումներ

Սիմպոզիումի մասնակիցները սկսեցին հետագա համագործակցության հիմքեր ստեղծել մինչև Անկարայից մեկնելը: Նրանք տարածաշրջանային խմբային հանդիպումների ժամանակ երկու անգամ հանդիպեցին, որտեղ կարող էին ցանցեր ստեղծել և կազմել ծրագրեր Նոր մարտավարությունների ծրագրի սկզբունքները օգտագործելու համար:

Կազմակերպված խմբային հանդիպումների առաջին նիստին այն մասնակիցները, որոնք եկել էին նմանատիպ տարածաշրջաններից, միմյանց ճանաչելու և տվյալ բնագավառում փորձը կիսելու առիթ ունեցան: Խմբային հանդիպումների երկրորդ շրջանում մասնակիցները գնահատեցին ամբողջ սիմպոզիումը իրենց տարածքին համապատասխանելու առնչությամբ և քննարկեցին, թե ինչպես Նոր տակտիկաների ծրագիրը օգտակար կլինի իրենց հետագա աշխատանքներում:

Յուրաքանչյուր տարածաշրջան կատարեց իր առաջադրանքը տարբեր ձևով: Աֆրիկայի տարածաշրջանի խմբային հանդիպման մասնակիցները պլանավորեցին զարգացնել մի աֆրիկական ուղեցույց, որը լուսաբանում է Աֆրիկայում գործածվող մարտավարությունների մի շարք: Լատինական Ամերիկայի մասնակիցները ստեղծելու էին մի online ձև, որպեսզի ուղարկեն տարածաշրջանին վերաբերող մարդու իրավունքների ներկա իրավիճակները՝ մարտավարական առաջարկությունների բարելավումների նպատակով:

Ազդեցությունը Թուրքիայի վրա

Սիմպոզիումը Թուրքիայում կարևոր ազդեցություն ունեցավ: Թուրքիայում կառավարական կառույցներն ու հասարակական կազմակերպությունները ձգտում էին բարելավելու մարդու իրավունքների վիճակը այդ երկրում: Նույնիսկ մինչև սիմպոզիումը Նոր Մարտավարությունների գործունեությունները տարածաշրջանում, որոնք իրականացվել են Հելսինկյան Քաղաքացիական Ասամբլեայի Թուրքիայի կոմիտեի կողմից, նախաձեռնեցին մի նոր տեսակի զրույց ու մարդու իրավունքներով զբաղվողների մոտ կարողությունների զարգացում: Մի շարք աշխատանքային հանդիպումներ են կազմակերպվել, որոնք ամբողջ երկրից ներգրավել էին մարդու իրավունքների ավելի քան 200 ակտիվիստներ: Թուրքիայում սիմպոզիումը տեղի ունեցավ մի կարևոր պահի, երբ նախատեսվում էր Եվրամիության հետ պաշտոնական բանակցությունները:

Սիմպոզիումը Թուրքիայում կարևոր իրադարձություն էր և բազմաթիվ ներդրումներ ունեցավ թուրքական հասարակության համար, ներառյալ.

- ազգային մակարդակում, մարդու իրավունքների ավելի մեծ ըմբռնմանը նպաստելուն՝ ցույց տալով, որ մարդու իրավունքները գաղափար է լայն թեմաներով ու կազմակերպություններով:
- Մինչ 2004 թ-ի դեկտեմբերի Եվրամիության գագաթնաժողովը մարդու իրավունքների և ժողովրդավարության բարեփոխումների ուղղությամբ թուրքական կառավարության պարտականությունների լուսաբանումը
- Կառավարության պաշտոնյաների մասնակցությունը սիմպոզիումին իրականացրեց մի կարևոր Նոր մարտավարության տեսլական – տարբեր նախարարությունների կառավարական անձնակազմերի ուսուցում մարդու իրավունքների լայն հասկացությունների և առանձնահատուկ մարտավարությունների վերաբերյալ
- Թուրքիայի կազմակերպությունները, որոնք կազմակերպել և մասնակցել են այս հանդիպմանը, միշտ էլ եղել են կարևոր հանգույց Նոր մարտավարությունների ցանցում: Թուրքիայում Նոր մարտավարությունների ցանցի հզորացումն ու ընդլայնումը ստեղծում է Թուրքիայում մարդու իրավունքների վիճակի վրա երկար ժամանակով մշտական և կարևոր ազդեցություն ունենալու հնարավորություն:

Երկրի երեք հիմնական հեռուստատեսությունները լուսաբանել են այդ իրադարձությունը:

Սիմպոզիումի գնահատումն ու ազդեցությունը

Նոր մարտավարությունների ծրագիրը վարձել էր անկախ գնահատող, Բիլ Ջոնսթոնին, որպեսզի նա գնահատեր սիմպոզիումի հաջողությունը: Նրա գնահատումը կենտրոնացված էր հետևյալի վրա.

- աշխատանքային հանդիպումների օգտակարությունը
- նոր ցանցերի զարգացումը
- խելամիտ, անսխալ և բավարար տրամաբանական կապը
- արդյունավետ ներկայացնողները

Նրա հաշվետվությունը հիմնված է մասնակիցների կողմից լրացված ձևերի վրա, որը գնահատում է և՛ սիմպոզիումը, որպես ամբողջություն, և՛ անհատական աշխատանքային հանդիպումները, որոնց հաճախել են: Լրացված գնահատման ձևերը ցույց են տվել, որ սիմպոզիումը բարձր մակարդակի վրա էր:

Լրացնողներից 456 -ը դրականորեն են մեկնաբանել աշխատանքային հանդիպումները: Ըստ մասնակիցների, սիմպոզիումը Նոր մարտավարություններին առնչվող ավելի շատ գործողությունների պահանջ է ստեղծել և ոգեշնչել է շատերին, որպեսզի նրանք նախաձեռնեն այդ

գործողությունները: 12 երկրների մասնակիցներ նշել են իրենց լրացրած ձևերում, որ նրանք պլանավորում են աշխատել սիմպոզիումի ընթացքում ձևավորված նոր ցանցերի հետ:

Սա մասնավորապես քաջալերող է Նոր մարտավարությունների ծրագրի համար:

Մենք նաև գոհ էինք, որ մասնակիցները սիմպոզիումը բարձր էին գնահատել երկու կարևոր կատեգորիաներում.

- Ընդհանուր առմամբ, որքան արդյունավետորեն են մասնակիցները կենտրոնացել ավելի շատ մարտավարության, քան թե խնդրի վրա հարցին տվել են միջինը 4 միավոր, ըստ 1-5 սանդղակի
- Որտե՞ղ կղնեիք Նոր մարտավարության պոտենցիալը դրականորեն ազդելու աշխարհում մարդու իրավունքների վրա հարցին միջինը տվել են 5,5 միավոր, ըստ 1-7 սանդղակի, մասնակիցների մեկ քառորդը տվել են ամենաբարձր գնահատականը:

Մասնակիցներին նաև հարցրել են, թե ինչ կուզենային, որ Նոր մարտավարությունների ծրագիրը աներ իրենց տարածաշրջանում: Շատ մասնակիցներ շահագրգռված էին ունենալ հնարավորություններ հանդիպելու նոր մարտավարությունների շուրջ, հատկապես տեղական ու տարածաշրջանային մակարդակով:

Բարելավում պահանջող ոլորտներ

Նոր մարտավարությունների ծրագիրը մասնակիցներից մեկնաբանություններ է ակնկալում, որպեսզի լավագույնս ծառայի մարդու իրավունքներով զբաղվողների կարիքներին ամբողջ աշխարհում: Բարելավում պահանջող ոլորտների վերաբերյալ մասնակիցները սիմպոզիումին տվեցին ամենացածր գնահատականը հետևյալ ոլորտում «լեզվակն կապը»: Այս ոլորտի մեկնաբանություններից շատերը նշում էին մարդկանց հետ փոխազդեցության դժվարությունը, որոնք խոսում են այլ լեզվով ոչ պաշտոնական աշխատանքային հանդիպումների ժամանակ, մինչդեռ չորս լեզուներով թարգմանության հնարավորություն կար: Մասնակիցներից մեկը գրել է. «Ցանցեր ստեղծելու և ինֆորմացիայի փոխանակման համար հաղորդակցումը հաճախ սահմանափակված էր թարգմանչի մատչելիության և պատրաստակամության պատճառով»: Որոշ մարդիկ քննադատում էին թարգմանության որակը: Ջանքեր պետք է գործադրվեն՝ վերացնելու լեզվական խոչընդոտները հետագա հանդիպումների ժամանակ:

Երբ առանձին աշխատանքային հանդիպումներ էին քննադատվում, այն ընդհանրապես կապված էր կարգավորողների քննարկման հսկողության հետ կամ ժամանակի վատ օգտագործման հետ: Մասնակիցներից շատերը նշել են իրենց գնահատման մեջ, որ լավ կլիներ, եթե հնարավորություն ունենային ավելի ակտիվորեն մասնակցել լիակազմ նիստերին և շատ ժամանակ ունենային քննարկումների համար:

Քաղված դասերը

Մասնակիցներից լսեցինք և ինքներս դիտարկեցինք աշխատանքային հանդիպումներում, որ մարդու իրավունքների ակտիվիստները իրապես ուզում են նորարարություն, մարտավարական և ռազմավարական մտածողություն: Միևնույն ժամանակ, նեղ կենտրոնացումը, որն անտեսում է այն կոնտեքստը, որտեղ տակտիկաները իրականացվում են կամ թույլ չի տալիս քննարկել հենց թեմաները, միշտ չէ, որ օգտակար է:

1. Մարդու իրավունքների շարժումը կարիք ունի նոր գաղափարների, որոնք կներշնչեն նորոգարություն

Մասնակիցները խնդրեցին, որ Նոր տակտիկաների ծրագիրը շարունակի գործել որպես տակտիկաների ռեսուրս և ակտիվորեն ոսուցանի առանձին տակտիկաներ և ռազմավարության կառուցում:

2. Փաստագրումը և մարտավարություններով կիսվելը կհզորացնի մարդու իրավունքների շարժումը

Իրավապաշտպանները հազվադեպ են ունենում ժամանակ հետ գնալ և փաստագրել իրենց գործողություններն ու փորձը: և եթե մենք ուզում ենք բարելավենք մեր աշխատանքի արդյունավետությունը, մենք պետք է սովորենք նրանցից, ովքեր հանդիպել են նման խոչընդոտների: Այս առումով մասնակիցները գտել են, որ Նոր տակտիկաների գործիքները՝ տակտիկական գրքույկը, online տվյալների բազան և այլ ռեսուրսները արժեքավոր էին:

3. Մենք բոլորս փոխկապակցված ենք և մենք հավաքվելու հնարավորության ավելի շատ կարիք ունենք

Տարբեր տարածաշրջանների իրավապաշտպանները հավաքվում են Սիմպոզիումի ժամանակ: Նրանց մեկնաբանություններից պարզ էր, որ սա շատ հազվադեպ և շատ ցանկալի հնարավորություն էր՝ հարաբերություններ ձևավորելու տարբեր վայրերի իրավապաշտպանների հետ:

4. Տակտիկաներն ադապտացնելը պահանջում է ռազմավարական կոնտեքստի գիտելիքներ, որտեղ նրանք կիրառվել են

Մասնակիցները մեզ հայտնեցին, որ բացի այն, որ նրանք բարձր են գնահատում տակտիկական կենտրոնացումը Սիմպոզիումի ընթացքում, նրանք նաև կարևորեցին ավելի շատ իմանալը կոնտեքստի մասին, որտեղ տակտիկան ընտրվել է և ինչպես է կապվել այլ տակտիկաներին: Ինֆորմացիան կարևոր է հասկանալու համար որոշակի տակտիկաների հնարավոր կիրառումները, ուժեղ ու թույլ կողմերը:

5. Լուծումների կարևորումն ու նշանավորումը հաղորդում է եռանդ

Իրավապաշտպանները ամեն օր հանդիպում են դժվարությունների: Մարդու իրավունքների շարժումները, ինչպես ցանակացած այլ խումբ, ուզում է ունենալ առաջընթացի և հույսի զգացում: Մասնակիցներն ասել են, որ Սիմպոզիումն իրենց համար հնարավորություն էր ստուգելու իրենց ձեռքբերումներն ու լուծումները, որը նրանց հաղորդեց նոր եռանդ:

Տարածաշրջանային աշխատանքային հանդիպումները և Նոր տակտիկաների կիրառումը

Ծրագրի այլ հետագա գործողությունները ներառում են ասիական տարածաշրջանային ուսուցանող աշխատանքային հանդիպումը, որը տեղի կունենա 2005 թ-ին: Ասիական աշխատանքային հանդիպման ֆորմատը կարտահայտի այն առաջնահերթությունները, որոնք ներկայացվել են ասիական տարածաշրջանի մասնակիցների կողմից սիմպոզիումի ժամանակ, որոնք կիսվել են իրենց գաղափարներով և առաջարկություններով իրենց տարածաշրջանային հանդիպման ժամանակ: Աշխատանքային հանդիպման կենտրոնացումը պետք է լինի տարածաշրջանի մի շարք գիտությունների ճյուղերից 30-40 մասնակիցներին միասին հավաքելու վրա, որպեսզի միմյանց ուսուցանեն մարտավարական նորարարություններ, որ իրենք օգտագործել են արդյունավետորեն, որպեսզի աջակցեն մարդու իրավունքներին: Մասնակիցները նաև կքննարկեն մարտավարությունները միավորելու ուղիները:

Խոշտանգումների զոհերի Կենտրոնը նաև կհետազոտի երկու հնարավորություն մեթոդոլոգիան և հետազոտությունը խորությամբ կիրառելու համար: Խոշտանգումների զոհերի Կենտրոնը կուսումնասիրի ռազմավարության կառուցման միջոցառման ստեղծումը առաջատար կազմակերպությունների հետ, որպեսզի գնահատի, թե ինչպես մարտավարությունները կարող են կիրառվել խոշտանգումների դեմ: Եկող տարին նաև ընձեռում է Մարդու իրավունքների Նոր Մարտավարությունների շուրջ Թուրքիայում ավելի մեծ շարժում հիմնելու հնարավորություն:

Բացի թուրքերեն լեզվով էլեկտրոնային, տպագիր և տեսանյութից, Չելսինկյան Քաղաքացիական Ասամբլեան պլանավորում է շարունակել ընդգրկել Թուրքիայի հասարակությանն ու մասնավոր սեկտորին, ինչպես նաև հասարակական կազմակերպություններին, մարդու իրավունքների համալսարանական կենտրոններին Նոր Մարտավարությունների գաղափարների ու հասկացությունների մեջ: ՀՔԱ-ն նաև նախատեսում է Թուրքիայում և Միջին Արևելքում, Արևմտյան Եվրոպայում, Կովկասում մարտավարական նորարարությունների վերաբերյալ հետագա ուսումնասիրություն:

Եզրահանգում

Մարդու իրավունքների Նոր տակտիկաների Միջազգային սիմպոզիումը ցույց տվեց, որ մարդու իրավունքների շարժումները ձգտում ունեն մարտավարական և ռազմավարական մտածողության: Մենք սա տեսանք մասնակիցների խանդավառության մեջ, աշխարհի մյուս մասերում ավելի շատ ծրագրեր ունենալու մեծ պահանջով և այն նախաձեռնությամբ, որ շատ մասնակիցներ արդեն ձեռնարկել են իրագործել իրենց աշխատանքում այն, ինչ սովորեցին:

2005 թ-ին մենք շատ ենք ուզում աշխատել աշխարհի բոլոր վայրերի իրավապաշտպանների հետ, քանի որ նրանք գտնում են նոր և արդյունավետ ուղիներ՝ ստեղծելու ավելի մեծ ազդեցություն, որպեսզի նպաստեն ժողովրդավարությանը և մարդու իրավունքներին:

Հավելված

Աշխատանքային հանդիպումներ

ԱՅ 211-Մարդու Իրավունքների արդյունավետ կոմիտեների ձևավորում

Մարդու Իրավունքների արդյունավետ կոմիտեները հաջողությամբ կատարում են.

1. Կառավարությունից անկախ լինելու պահպանումը
2. Մարդու իրավունքների պաշտպանություն
3. Մարդու իրավունքների աջակցություն
4. Ջբաղվել անհատների բողոքներով

Այս աշխատանքային հանդիպումը կներկայացնի 4 կոմիտեների հեռանկարները և տակտիկաները, որոնք նրանք օգտագործել են իրականացնելու այս մանդատները:

ԱՅ 212 – Տուժածների համար անվճար իրավաբանական ծառայություն

Ուտնահարված իրավունքներով տուժածների համար հիմնական խոչընդոտ է հանդիսանում այն, որ նրանց համար իրավական դաշտը մատչելի չէ, որպեսզի նրանք կարողանան բողոքել ոճրագործների /հանցագործների/ դեմ: Այս աշխատանքային հանդիպումը կներկայացնի հաջողված մարտավարություններ անվճար իրավաբանական ծառայությունների ներգրավման համար բազմաթիվ պրոֆեսիոնալ ռեսուրսների միջոցով:

ԱՅ 213 - Դրամի ուժի բարձրացում

Փողը հզոր գործոն է որևէ փոփոխություն կատարելու դեմ կամ ի օգուտ դրա: Հետևելով փողին՝ կարելի է մտահոգություններ ունենալ, թե ինչպես կարելի է շատացնել փողը՝ ինչ-որ փոփոխության անելու համար: Բանկերը, ազգային բանկային համակարգից մինչև Համաշխարհային բանկը, ինչպես նաև ֆինանսական կառույցների բաժնետերերը կարող են կասեցնել ներդրումները ընդհանուր կամ կառավարական կառույցներում, որոնք ուտնահարում են մարդու իրավունքները:

ԱՅ 214 - Բջջային հեռախոսներ. Հաղորդակցություն գործելու նպատակով

Բջջային հեռախոսներն արագ տարածում գտան ամբողջ աշխարհում՝ որպես հաղորդակցման համեմատաբար մատչելի միջոց և որպես պաշտպանության մի ձև: Դրանք հնարավոր են դարձնում «Միջազգային

ներում»-ի ցանցերի համար էլ ավելի արագ արձագանքել խախտումներին, օգնում են կանխել բռնությունը Հյուսիսային Իռլանդիայում:

ԱՅ 215-Ոստիկանություն. Մարդու իրավունքների համար առաջին գծի նախապատրաստում Իրավապահ կառույցների շրջանակներում:

Իրավապահ մարմինների աշխատակազմը ամենադժվար խմբերից մեկն մարդու իրավունքները հարգելու առումով: Նրանց համար կազմակերպվող մարդու իրավունքների վերաբերյալ թրեյնինգները և այդ թրեյնինգի զարգացմանը մասնակցությունը կարող է հաղթահարել համառ դիմադրումը, ուժեղացնել օրինականությունը և օգնել իրավապահ մարմիններին հասկանալ մարդու իրավունքների կարևորությունն ու արժեքը իրենց և հասարակության համար, որին ծառայում են:

ԱՅ 216 – Ուղեկցում տուժածների համար, երբ նրանք պատմություններ են պատմում խախտումների վերաբերյալ:

Խախտումներից տուժածների ֆիզիկական, հոգեբանական և էմոցիոնալ վիճակը ապահովելը կարևոր է օգնելու նրանց պատմել իրենց բոլոր պատմությունները: Ուղեկցումը, որը կարող է շատ ձևեր ունենալ, նրանց օգնելու ձևերից մեկն է: Լինի դատարանում կամ համայնքային ոչ պաշտոնական քննարկումներում, երբ տուժածները պատմում են իրենց պատմությունները, նրանք կարող են օգնել շարժել սառույցը, որը գոյացել է խախտումների շուրջ, վերջ տալ հանցագործությունների անպատժելիությանը և հող ստեղծել ապաքինելու համար:

ԱՅ 217 – Ներդրում ռազմավարության ձևավորման մեջ:

Ծանոթացեք ոչ բռնի մարտավարության օգտագործմանը և Օթոր-ի /ուսանողների ընդդիմական շարժում Սերբիայում Միլոշևիչի ռեժիմի դեմ/ յուրահատուկ օրինակին: Օթոր-ը քաղաքական ընդդիմության միավորման կատալիզատոր էր և համախմբեց Սերբիայի բնակչությանը, երբ Միլոշևիչը փորձում էր կեղծել 2000 թ-ի հոկտեմբերի ընտրությունները:

ԱՅ 221 – Կրոնական դրույթներ. Մարդու իրավունքների ընթացման փոփոխումը

Մարդիկ իրենց կրոնական հավատքից և պրակտիկայից առաջնորդում, ուժ և սփոփանք են ստանում: Մարդու իրավունքների ուղղությամբ տարվող աշխատանքներն ու ջանքերը կարող են առաջ քաշվել՝ բնակչությանը կրթելով և մարդկանց օգնելով հասկանալ մանդատները, որոնք ծագում են իրենց իսկ հավատքի սովորույթներից՝ լուծելու այն սոցիալական խնդիրները, որոնք կարող են լինել շփոթեցնող և վիճելի, ինչպես օրինակ, կանանց

իրավունքները, հոմոսեքսուալների իրավունքները և ՁԻԱՀ-ով ու ՄԻԱԿ-ով հիվանդ մարդկանց իրավունքները:

ԱՅ 222 - Ստեղծել համայնքի մուտքը արդարություն:

Ստեղծագործական ադապտացիան և մեխանիզմները համայնքային մակարդակում օգնել են նպաստել իրավունքների և արդարության մատչելիությանը, ապահովել այլընտրանքային պատժամիջոցների օրինակներով կարևոր բնակչությանը, կանխել խոշտանգումները և վատ վերաբերմունքը, առաջարկել ֆորում մարդու իրավունքների հետ կապված դժգոհություններն արտահայտելու համար:

ԱՅ 223 - Քարտեզագրային համակարգեր. համայնք /քարտ/ հարաբերությունները դարձնել տեսանելի և հասկանալի:

Նկարը կան այս դեպքում քարտեզը կարող է ավելին ասել քան 1000 բառը: Գլոբալ ինֆորմացիոն համակարգի /ԳԳՀ/ տեխնոլոգիայով պատրաստված քարտեզներից, որոնք որոշում են վատ վայրերը, մինչև քանդված շրջակայքերը վերականգնող քարտեզը, կան մինչև քարտեզը, որը ցույց է տալիս խոշտանգման կիրառմանը նպաստող փոխկապակցված համակարգերը, այս քարտեզները կարող են արժեքավոր գործիքներ հանդիսանալ:

ԱՅ 224- Դատական գործընթացների որպես հզոր գործիք մարդու իրավունքների համար:

Դատական գիտությունը վկայում է այն մասին, որ այն կարող է հիմք հանդիսանալ մարդու իրավունքներ խախտումների դեմ դատական գործ հարուցելու և հետագա ուսումնասիրությունների համար: Ավելացնենք, որ դատական ընթացքը կարող է ընտանիքներին և համայնքներին տեղեկություններ տրամադրել իրենց հարազատների մասին, այնպես որ նրանք կսկսեն ապաքինումը և կդադարեն վիճաբանել:

ԱՅ 227 – Ներդրում ռազմավարության ձևավորման մեջ

Ուսումնասիրենք այն ռազմավարությունը, որն օգտագործել է Մեքսիկայի կառավարության կողմից, որպեսզի մարդու իրավունքները դրվի արտաքին քաղաքականության կենտրոնում, մարդու իրավունքների միջազգային ռեսուրսները մոբիլիզացնելու նպատակով:

ԱՅ 312 - Անհնազանդություն: Հասարակության մասնակցության վտանգներն ու արդյունքները:

Ոչ բռնի, լավ պլանավորված, նպատակասլաց անհնազանդությունը հայտնի է որպես պատմության ընթացքի փոփոխող, Մահաթմա Գանդիից մինչև Մարտին Լյութեր Քինգ, մինչև այսօրվա պայքարները:

Նույնիսկ անհնազանդության ամենափոքր մասշտաբի գործողությունները կարող են նշանակալի արդյունքներ ունենալ առևտրի և գլոբալիզացիայի վրա, խոսքի ազատության և ազատ տեղաշարժվելու և խաղաղության խնդիրների վրա:

ԱՅ 313–Կառավարության ռեսուրսների ներգրավում:

Ինչ ավելի լավ ձև կա, որ կառավարությունն արտահայտի իր կարծիքը մարդու իրավունքների վերաբերյալ, քան կոնկրետ ռեսուրսների ապահովումն է: Այս պոտենցիալ ռեսուրսների որոշումն ու ուսումնասիրումը կարող է կարևոր երկարաժամկետ արդյունքներ ապահովել: Այս օրինակները լուսաբանում են կառավարության ռեսուրսների օգտագործումը՝ զարգացնելով համագործակցության փորձեր՝ հկ-ների և կառավարության մարմինների միջև:

ԱՅ 315-Հասարակության ներգրավում խնդրագրերի միջոցով՝ մասնակցությունը բարձրացնելու և փոփոխությունների հասնելու համար

Խնդրագրերը հաջող են եղել ժողովրդավարության զարգացման համար, հանրության ընկալման և մասնակցության վրա ազդելու, օրենսդրական գործընթացների և քաղաքականության փոխելու համար:

ԱՅ 317- Ներդրում ռազմավարության կառուցման մեջ

Իմացեք խոշտանգման կանխարգելման մասին մտածելու նոր մոտեցման և գործընթացի մասին: Տեսանելի «տակտիկական քարտեզը» ապահովում է կոնկրետ գործիք, որը կօգնի զարգացնել ռազմավարություն և պլանավարել ավելի արդյունավետ մարտավարություն խոշտանգումների դեմ պայքարելու համար:

ԱՅ 321 -Կառավարության հետ համագործակցային հարաբերությունների ձևավորում

Ուսումնասիրեք ինչպես հարաբերություններ մշակել և գործըկերներ դառնալ կառավարության հետ՝ աջակցություն ապահովելու և նրանց համոզելու բարեփոխումներ իրականացնել, ներառյալ պրակտիկայի չափանիշները, կառավարության մասնակցությունը և օրենսդրական բարեփոխումները՝ մարդու իրավունքների աջակցության նպատակով:

ԱՅ 322- Մշակութային ռեսուրսների օգտագործում տեղեկագրվածության ձևավորման և գործողության ոգեշնչելու նպատակով

Որոշ հարցեր կարող են դժվար լինել քննարկել կամ ընկալելի լինել հասարակական գիտակցման համար: Օրինակ՝ կենցաղային բռնություն, ռասիզմ և նույնիսկ մարդու իրավունքների ընդհանուր թեման: Մշակութային ռեսուրսները, ինչպես թատրոնը /որը կառնչվի կենցաղային բռնությանը/, համերգներ և ֆուտբոլի մրցաշար /ռասիզմի մասին տեղեկատվության բարձրացում/ և կինո /սկսել քննարկումներ մարդու իրավունքների վերաբերյալ/ օգտագործվել են խայտառակությունը հաղթահարելու, իրազեկելու, գործողություն ոգեշնչելու համար:

ԱՅ 323- Պատմական վայրեր. Օգտագործել տեղանքի հզորությունը

Մարդու իրավունքների անցյալի խախտումների վայրերը կարելի է փոխել գիտակցության ակտիվ վայրերի, որը երկխոսություն կձևավորի տարբեր խմբերի մեջ:

Պատմական տեղանքները կարող են ուժ հանդիսանալ և համախմբել մասնատված մարդկանց՝ ձևավորելով ավելի լավ ապագա՝ հիշելով անցյալի դասերը:

ԱՅ 325- Հնարավորություն մասնակցային կրթության միջոցով

Մասնակցության կրթությունը կարող է համակարգ ստեղծել անհատների և համայնքների պոտենցիալը վեր հանելու արդյունավետ առաջնորդության և քաղաքացիական հասարակության մասնակցության համար, որը կարող է ազդեցություն ունենալ կառավարության, հկ-ների վրա բոլոր մակարդակներում:

ԱՅ 326-Տեսանյութը որպես մարդու իրավունքների գործիք

Մարդու իրավունքների խախտումների վերաբերյալ տեսանյութերը կարող են վկա հանդիսանալ, կարող են կրթության համար ամենալավ գործիքը դառնալ և մարդկանց ոգեշնչել գործողության: ՀԿ-ները կարող են սովորել, թե ինչպես տեսանյութերը արդյունավետ օգտագործել մարդու իրավունքների պաշտպանության գործում:

ԱՅ 327-Ներդրում ռազմավարության ձևավորման մեջ

Ուսումնասիրեք, թե ինչպես են Հնդկաստանի ակտիվիստները ռազմավարություն մշակում անչափահասների շահագործմանը վերջ տալու համար՝ օգտագործելով տակտիկաներ, որոնք կօգնեն նրանց աջակցություն ստանալ աշխարհի բոլոր կողմերից:

ԱՅ 413- Բյուջեներ. Հաշվետու լինելու և թափանցիկության գործիքներ:

Բյուջեները և ծախսերը չպետք է գաղտնի լինեն: Դրանք ապահովում են առանձնահատուկ և կոնկրետ ձևեր կառավարական քաղաքականությունից մինչև ինֆրաստրուկտուրաների զարգացման և բյուրոկրատական կոռուպցիայի մոնիթորինգի համար:

ԱՅ 414 -Տեղական մակարդակի մարդու իրավունքների մոնիտորինգի թրեյնինգ

Մարդու իրավունքների պաշտպանության օրենքները չեն կարող գործել տեղական մակարդակով տարբեր պատճառներով՝ ներառյալ խտրականությունը, պաշտպանության դիմելու համար գիտելիքի և կառուցվածքի պակասը: Տեղական մակարդակում մարդկանց թրեյնինգները մարդու իրավունքների խախտումների վերաբերյալ մոնիտորինգ անելու և փաստաթղթեր հավաքելու համար օգնում են հասարակությանը փոխել մարդու իրավունքների մասին իրենց տեղական հասկացությունը:

ԱՅ 415 -Կապեր հաստատել ոստիկանության հետ կրթության և թրեյնինգների համար

Երբ պրոֆեսիոնալ օրինապահները ճիշտ փորձ ունեն, որը տալիս է հստակ գաղափար այն մասին, թե ինչու պետք է պաշտպանենք մարդու իրավունքները և ինչ է դա նշանակում, սա օգնում է բարելավել համայնքային հարաբերությունները և կարեկցանք առաջացնել նոր միգրանտների և կասկածյալ հանցագործների նկատմամբ:

ԱՅ 416- Հասարակության մասնակցության համար զանգվածային ակցիաներ

Հասարակ գործողությունները, ինչպես օրինակ լույս անջատելն ու միացնելը, կաթսաներն ու թավաները իրար խփելը կարող են ոգեշնչել միլիոնավոր մարդկանց կիսել իրենց ցանկությունները փոփոխության համար հարաբերականորեն ապահով, բայց հասարակական ձևով: Այս հասարակ գործողությունները, քանի որ հաճախ սահմանափակվում են ինչ-որ հարցի կամ կետի առումով կարող են հզոր ազդանշան տալ հասարակության կարծիքի վերաբերյալ: